DOI: https://doi.org/10.59630/25792644-2024.2.27-46

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԴԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՌԱԶՄԻԿ ՏԻԳՐԱՆՅԱՆ
ԵՊԲՀ Հասարակագիտության ամբիոնի դոցենտ
razmik52@rambler.ru

Բանալի բառեր - սոցիալական ինստիտուտ, հասարակություն, մարդ, արժեք, առաջընթաց, զարգացում, տրանսֆորմացիա:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական վերափոխումները սոցիալական ինստիտուտների կողմից հասարակության տարբեր կողմերի կառուցվածքային փոփոխություններ են: Այն նշանակում է այնպիսի արմատական որակական փոփոխություն, երբսոցիալական իրականության հիմքում տեղի են ունենում փոփոխություններ, հատկապես անցման շրջանում, որոնց արձագանքները զգացվում են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, վերափոխելով նրա կարևորագույն և էական որակները: Հասարակության սոցիալ-տնտեսական ու քաղաքական հակասությունների մասին վերլուծություններում մշտապես մատնացույց է արվում անցման շրջանում գտնվելու երևույթը և այնպիսի պատկերացում է ստացվում, որ այդ շրջանի ավարտը խիստ անորոշ է:

Որո՞նք են անցման շրջան կոչվող երևույթի սահմանները, կարելի՞ է արդյոք նույնացնել «անցման շրջան» և «տրանսֆորմացիա» հասկացությունները հասարակական հարաբերությունների միևնույն ժամանակաշրջանում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարաբերությունները բնութագրելու համար

և ի վերջո, ներկա ժամանակաշրջանում և մասնավորապես հետ-խորհրդային տարածքի երկրներում կապիտալիստական հարաբե-րություններին անցումը արդյո՞ք պետք է ընթանա այն նույն փու-լով ու եղանակներով, ինչով անցել են կապիտալիզմի միջուկ հան-դիսացող զարգացած երկրները, թե՞ կարող էին և կարող են խու-սափել կապիտալիզմին անցման «շուկայական» թերապիա կոչված ցավագին երևույթներից:

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԵՒ ԳԼՈԲԱԼԱՑ-ՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՀԱՍԱ-ՐԱԿԱՐԳՈՒՄ

Անցման շրջանի հասարակությունները նկարագրել են Գ. Սպենսերը, Ե.Դյուրգեյը, Մ. Վեբերը, Ա.Տակվիլը և Կ. Մարքսը նշե-լով, որ այդ ժամանակաշրջանի ամենաբնորոշ հատկանիշներից մեկը կապիտալի սկզբնական կուտակման երևույթն է: 19-րդ դարի վերջին արևմտյան հասարակագիտական մտքում սուր բանավեճ էր ընթանում հասարակության զարգացման էվոլյուցիոն և հեղա-փոխական ուղղությունների կողմնակիցների միջև ևսոցիալական տրանսֆորմացիայի խնդիրը լուծվում էր այդ տեսությունների շրջանակներում:

Հասարակագիտական գրականության մեջ հատուկ տեղ է գրավում 20-րդ դարի առաջին կեսին Կ.Պոլանիի,,Մեծ տրանսֆոր-մացիա՝,, աշխատությունը, որտեղ հեղինակը ընդունելով սոցիալա-կան գործընթացների վրա ազդեցության բազմաթիվ գործոնները, այնուամենայնիվ վճռորոշ դեր է հատկացնում տնտեսականին, նշելով, որ

հենց տնտեսական վերափոխումների գործոնն է հասարա-կական տրանսֆորմացիոն գործընթացների հիմնական խթանողը:

Ինչ վերաբերվում է տրանսֆորմացիայի ակտուալությանը, ապա այն հասարակության մեջ ժամանակի պահանջներին համա-

պատասխան սոցիալական կյանքի նոր հատկանիշների ձեռքբերումն է, որի ընթացքում էական փոփոխություններ են տեղի ունենում մարդկանց կենսակերպում, սոցիալ-քաղաքական, տնտեսական կյանքում:

Մինչդեռ «անցման շրջան» հասկացությունը հաճախ ճշգրիտ չի արտացոլում տեղի ունեցող գործընթացները այնքանով, որքանով որ երևույթի սկիզբն ու ավարտը հստակ ու միանշանակ չէ: Ավելին, առանձին դեպքերում մի շարք հեղինակներ անցման շրջանը հասկանում են ոչ թե որպես սոցիոլոգիական կատեգորիա, այլ հատուկ հասկացություն, որը բնութագրում է միայն կապիտալիզմից սոցիալիզմին անցումը:[1]

Այդ իմաստով «տրանսֆորմացիա» հասկացությունը ավելի միանշանակ և հստակ է բնութագրում տեղի ունեցող գործընթացները, որի մեջհասկացվում է ինչպես սկզբնական ձևի, այնպես էլ էական հատկությունների ընդհանուր փոփոխություն, վերափոխում: Ակնհայտ է, որ տրանսֆորմացիան չի բնութագրում փոփոխությունների միակողմանի ուղղվածությունը, այն կարող է լինել ինչպես առաջադիմության, այնպես էլ հետադիմության տեսքով: Գլխավորը տրանսֆորմացիայի մեջ հասարակական կյանքի ձևի ու բովանդակության, նրա ինստիտուցիոնալ ոլորտի արժեքների ու կյանքի մյուս սոցիալ-մշակութային կառուցվածքի վերափոխումն է: Քանի որ վերափոխման են ենթարկվում հասարակության բոլոր կողմերը, այդ իսկ պատճառով էլ ընդունված է կիրառել նաև «համակարգային տրանսֆորմացիա» հասկացությունը, որը ենթադրում է սոցիալական կառուցվածքի վերափոխում, տնտեսության աստիճանական փոփոխություններ, որոնց ընթացքում ինչպես կարող են զուգահեռաբար գոյություն ունենալ հինը, այնպես էլ նորը: Ընդ որում աստիճանաբար տեղի է ունենում սոցիալ-

[1] **Бутенко А., ШкробаА.** Диалектика общественного развития. Киев 1990, с. 320.

տնտեսական նախկին կառուցվածքների վերափոխում նորով, առաջացնելով սոցիալական նոր կառուցվածք: Եվ այդ փուլին բնորոշ օբյեկտիվ ռեալությունն այն է, որ ցանկացած անցման շրջան «հիվանդոտ է», նրան ուղեկցում են լուրջ վտանգներ, աճող սոցիալական անհավասարություն ու լարվածություն: Այդ վիճակում մարդկանց հին վարքային կարծրատիպերը չեն աշխատում և իրավիճակը ստիպում է նրանց սթափ գնահատելով սեփական հնարավորությունները, ադապտացվել ստեղծված իրավիճակին, կամ փորձել նրանից դուրս գալու ելքեր փնտրել:[1]

Սոցիալական տրանսֆորմացիայի առանցքում դրված է մոդեռնացման գաղափարը: Լայն իմաստով այննշանակում է ցանկացած առաջադիմական փոփոխություն, որը վերաբերվում է նաև ոչ կայուն սոցիալ-քաղաքական համակարգերին: Սակայն համակարգի ցանկացած անհավասարակշռություն դեռևս անցման փուլ մտնելու նշան չէ, իսկ հասարակության բարեփոխումների ընթացքում առաջացած անկայունությունը անցման շրջանի հետնույնացնելը անթույլատրելի է, որը երբեմն գրականության մեջ նկատվում է:[2]

Ժամանակակից գրականության մեջ անցման շրջան հասկացությունը օգտագործվում է մեկնաբանելուհամար վերջին երկու դարերի ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները, հատկապես նկատի է առնվումավանդական հասարակությունից ինդուստրիալի անցման ողջ պատմական ընթացքը: Այսպիսով, «տրանսֆորմացիա» կատեգորիան սոցիալական զարգացումը բնութագրող ավելի ընդհանուր ու ինքնուրույն սոցիոլոգիական կատեգորիա է: Ժամանակակից գիտության մեջ անցումային հասարակությունների մասին դրույթները ընկած են «մոդեռնացման»

---

[1] **Комаровский В.** Переходное сознание переходного периода. Общественные науки и современностъ. М. 1994, N1, с.39-46.

[2] **Зубкевич Л.А.**Основные подходы в определении начала и конца переходного периода в обществе //Вестник Нижегородского университета. 2004. Вып. 1 С. 433-438.

տեսության հիմքում, որոնք բնութագրում են մեր օրերի արևմտյան տիպի հասարակությունների անցման յուրահատկությունները: Տվյալ դեպքում կարևորվում է այն, թե ինչով է ինքնատիպ անցման ժամանակաշրջանը արդի դարաշրջանում և ինչով են պայմանավորված սոցիալական հարաբերությունների կառուցվածքային առանձնահատկությունները: Եթե ելնենք զուտ քանակական չափումներից, հիմք ընդունելով մոդեռնացման համար անհրաժեշտ հասարակության սոցիալ-տնտեսական զարգացվածության բարձր աստիճանը, ապա վերջինս հնարավորություն է տալիս գնահատել յուրաքանչյուր պետության հասարակության տեղը ժամանակակից քաղաքակրթությունում:

Իհարկե, սոցիալական տրանսֆորմացիայի, անցման փուլում գտնվող մեր տիպի հասարակությունների համար շատ կարևոր է տնտեսական զարգացման ամբողջական խնդիրների լուծումը երկրի համար: Սակայն այդ ասպեկտները ածանցյալ են և իրականում դրանք կախված են բոլորովին այլ անցումների հետ: Այսինքն, պարզ ասած մեր ժամանակակից հասարակարգի, նրա անցման վիճակի ընդհանուր փիլիսոփայական վերլուծությունը նոր մոտեցումների հարց է դնում: Այն, ինչը չի կարող տալ «մոդեռնացման» տեսությունը: Խնդիրը ոչ թե տվյալ տեսության թերության մեջ է, այլ առաջին հերթին այն բանի, որ գլխավոր, արմատական տեսական հիմնախնդիրը ոչ թե տեխնիկատնտեսական, այլ սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր բնույթի, լայն իմաստով հասարակարգի փոփոխության և վերջինիս հետ կապված տեխնիկատնտեսական, տեխնոլոգիական, գիտամշակութային և զարգացման այլ ասպեկտների մասին է:

Այս առնչությամբ շատ կարևոր հարց է առաջանում. գոյություն ունե՞ն արդյոք շուկայական հարաբերությունների կառուցման (անցման) այլընտրանքային եղանակներ: Այդ հարցի պատասխանը, որպես սոցիալական գործունեության հատուկ տեսակ տալիս է

Մ. Վեբերը:[1] Վեբերը գտնում է, որ բացի ժամանակակից կապիտալիզմից գոյություն ունի կապիտալիզմի ևս երկու տիպ, որոնք իրարից տարբերվում են ոչ թե պատմական ժամանակագրությամբ, այլ գործունեության տիպով:[2] Այստեղ Մ. Վեբերը կանգնում է խնդրի մեկնաբանման սոցիալ-մշակութային մոտեցման վրա, մի կողմ թողնելով մեկ միասնական կապիտալիզմի գոյության մասին ավանդական քաղաքատնտեսության մոտեցումները, որի կարծիքով կապիտալիզմը ծագելով 16-17 դարերում, անցնում է իր զարգացման տարբեր փուլերը: Ընդհակառակը՝ Վեբերի կարծիքի համաձայն գոյություն ունի կապիտալիզմի մի շարք սոցիալ-տնտեսական ձևեր: Ըստ Վեբերիժամանակակից արդյունաբերական կապիտալիզմը ձևավորվում է ոչ միայն կապիտալի կուտակման զուտ տնտեսական ճանապարհով, այլ հասարակության մեջ բուն կապիտալիզմի ոգու հաստատումով:[3] Ընդունելով կապիտալիզմին անցման մի շարքսոցիալ-տնտեսական ձևերի հնարավորության վեբերյան տեսակետը, այնուհանդերձ չպետք է մոռանալ այն կարևորագույն հանգամանքը, որ այսօրվա գլոբալացման գործընթացները իրենց որոշակի կնիքն են թողնում նիրենցով պայմանավորում անցման շրջանի զարգացման յուրահատկությունները: Ուստի, հասարակության զարգացման ամբողջ տրանսֆորմացիոն գործընթացները անհրաժեշտ է նաև այս տեսակետից վերլուծել:

ժամանակակից քաղաքակրթության առանցքը կազմող համերկրային ընդգրկումներ ձեռք բերող գլոբալացման գործընթացը անխուսափելի և պատմական անհրաժեշտություն է քաղաքակրթության զարգացման ժամանակակից փուլի համար: Իհարկե, գլոբալացումը հեռու է զուտ տնտեսական երևույթ լինելուց և հազիվ թե այն իրականություն դառնա միայն ու միայն տնտեսական զար-

---

[1] **Вебер М.** Избранное. Образ общества. М., 1994, с. 507.
[2] **Вебер М.** Избранное. Образ общества. М., 1994, с. 512
[3] **Вебер М.** Избранное. Образ общества. М., 1994, с. 557.

գացումների բերումով, չնայած այն բանին, որ հենց տնտեսական հարաբերությունների ոլորտի շնորհիվ է, որ հասարակական կյանքի զարգացումը ստանում էօբյեկտիվ և օրինաչափ բնույթ: Որքան էլ տնտեսականը վճռորոշ լինի այդ գործընթացում, այնուամենայնիվ գլոբալացումը չի կարող առանց հասարակական կյանքի մյուս ոլորտների, սոցիալական ինստիտուտների և մասնավորապես սոցիալական կառուցվածքային մակարդակների համանուն փոփոխությունների տեղի ունենալ: Եվ ամենից առաջ սոցիալականի կառուցվածքային յուրահատկություններով են պայմանավորված եղել հասարակության և՛ առաջընթաց, և՛ հետընթաց շարժումները, իսկ դասակարգերի միջև մղված պայքարը եղել է հասարակական կյանքի առաջընթացի շարժափոկերի մեջ ամենաառանցքայինը, որը արտահայտման տարբեր դրսևորումներ ունենալով, անցման շրջանում առանձնապես իրեն զգացնել է տալիս:

Բնականաբար անցման շրջանը, տրանսֆորմացիոն գործընթացները ընդգրկում են ոչ միայն ներպետական,այլ նաև պետությունների միջև հարաբերությունները: Մեր մոլորակի վրա հատկապես վերջին երկուտասնամյակներում տեղի ունեցող քաղաքական ու տնտեսական զարգացումները օբյեկտիվորեն հանգեցրեցին զարգացած ու զարգացող երկրների պետությունների տնտեսական աշխարհագրական միավորների փոխկախվածությանը: Մյուս կողմից՝ գլոբալ զարգացումները, հատկապես հետխորհրդային տարածքի բոլոր պետություններում, նորագույն պատմության ավարտն ազդարարեցին հասարակական կյանքի բոլորբնագավառներում լիբերալ արժեքների, ժողովրդավարության ու կապիտալիզմի հաղթանակով: Մինչդեռ գլոբալացման գործընթացները միատեսակ չեն ընկալվում ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ հետխորհրդային տարածքի շատ երկրներում, ուր այն ընկալվում է իբրև ամերիկանացում կամ արևմտացում:

Նման պայմաններում նույնքան օբյեկտիվ օրինաչափությամբ են թելադրված հակագլոբալիստականմբոստությունները ու անջատողական մղումները, հատկապես, եթե հաշվի առնենք, որ հետխորհրդային տարածքի անցման ժամանակաշրջան ապրող երկրների բնակչության ճնշող մեծամասնությունը, այդ թվում նաև մերհանրապետությունը, իր մաշկի վրա զգալով սոցիալ-տնտեսական փոփոխությունների, տրանսֆորմացիոնգործընթացների հետևանքները, այդպես էլ մինչև օրս բարեկեցության աստիճանով չկարողացան մոտենալ զարգացած երկրների համապատասխան ցուցանիշներին:

Ավելին, սոցիալական աղքատությունն ու մշտական հակամարտությունների կենտրոնները հենց այդերկրներում են: Ուստի, այժմ զարգացող կոչված երկրներն ավելի շատ գլոբալ հիմնախնդիրների, քան հաջողվածտրանսֆորմացիոն գործընթացների օրինակ են: Այս առնչությամբ օրինաչափ հարցեր են առաջանում. ինչու՞մն ենթման ապակառուցողական գործընթացների իրական պատճառները, չէ՞ որ դրանց զգալի մասը տրանսֆորմացիոն գործընթացներին նախորդող ժամանակաշրջանում բացակայել են և վերջապես որքանո՞վ են դրանք ուղղորդվում և ի՞նչ նպատակի իրականացման են միտված:

Այս և նման այլ կարգի հարցերի տարատեսակ մեկնաբանությունները իրենց արտացոլումն են գտելբազմաթիվ հեղինակների գիտական աշխատություններում, սկզբունքներում, գիտական հարցադրումներում:

Այսպես՝ քաղաքակրթական մոտեցման ներկայացուցիչները հասարակության պատմությունը ու նրա կառուցվածքըներկայացնում են որպես բազմաթիվ հասարակական կարգ, մշակույթ ու արժեքներ ունեցող քաղաքակրթությունների փոխազդեցությունների գործընթաց: Եվ քանի որ զանազան քաղաքակրթություններ վերահսկում են անհավասար ծավալի ռեսուրսներ, հետևաբար քա-

ղաքակրթությունների պայքարի ընթացքում նրանցից մեկն ավելի կենսունակ և ուժեղ է գտնվում, որն էլ իրենով պայմանավորում է զարգացման գործընթացը:

Ուստի մարդկության ամբողջ պատմությունը քաղաքակրթությունների փոխհարաբերությունների, կոնֆլիկտների ուպայքարի պատմություն է, որը շարունակվում է այսօր՝ գլոբալացվող երկրային քաղաքակրթության էվոլյուցիայիմեր դարաշրջանում:

Գաղտնիք չէ, որ կապիտալիզմի արդի համակարգը բաղկացած է տնտեսական ու սոցիալականզարգացվածության երկու անհավասար ենթահամակարգերից՝ զարգացած կենտրոնի և նրանից տնտեսապես ու ֆինանսապես կախված ծայրամասային երկրներից: Վերջիններիս տնտեսապես կախյալ վիճակն իր կնիքն էթողնում հասարակական կյանքի բոլոր ոլորտների, այդ թվում նաև թե՛ սոցիալական կառուցվածքի, թե՛ հոգևորկյանքի վրա, որոնք բնականաբար չեն կարող լինել զարգացած երկրների չափանիշներին համապատասխան, այլայն ձևավորվում է ելնելով կապիտալի կուտակման ժամանակաշրջանին բնորոշ սոցիալ-տնտեսական կացութաձևի հատկանիշներով:

Զարգացած կամ կապիտալիզմի միջուկ հանդիսացող երկրների և զարգացող, տրանսֆորմացիայի փուլումգտնվող պետությունների միջև ձևավորվող թե՛ տնտեսական ու թե՛ քաղաքական սկզբունքներն ավելի շատենթակայական քան հավասարության հարաբերությունների վրա են հիմնված, որի արդյունքում կախյալ երկրների քաղաքական ու տնտեսական շահերը ենթարկվում են զարգացած երկրների համապատասխան շահերին: Հենց այս հանգամանքն էլ՝ զարգացած երկրներից կախյալ երկրների կախվածության կառուցվածքի ու ձևավորման մշտական վերարտադրությունը զարգացող երկրների համար ավելի բարձր մակարդակ ապահովելու ճանապարհին խոչընդոտներ է առաջացնում:

Այսքանով հանդերձ, վերջիններիս հաղթահարումը կախյալ պետությունների կողմից հնարավոր է, եթեապահովված է պետության տնտեսական անկախությունը և ազատ է կենտրոնի երկրների տնտեսական ուքաղաքական ճնշումներից, որի իրական հնարավորությունները զարգացող երկրների մեծ մասը պրակտիկորենգրեթե չունեն:

Մինչդեռ, կախյալ երկրների զգալի մասում ընթացող տրանսֆորմացիայի գործընթացները հասարակությաննավելի են ներքաշում սոցիալ-տնտեսական այնպիսի լուրջ խնդիրների մեջ, ինչպիսիք են արդյունաբերության ու գյուղատնտեսության քայքայումը, երկրի բնակչության մեծամասնության աղքատացումը, հարուստների նոր շերտի ձևավորումը, զանգվածային գործազրկության առաջացումը և այլն:

Գլոբալացումը, ինչպես նաև հետխորհրդային տարածքի զարգացող երկրներում ընթացող տրանսֆորմացիոն գործընթացները բոլորովին չեն նշանակում գոյություն ունեցող տարբեր տնտեսական մակարդակների վերացում:

Կապիտալիստական համակարգում կախյալ երկրների գործոնը եղել ու մնում է հավելյալ արժեքի ստացմանայն աղբյուրը, որը ապահովում է կապիտալիստական ամբողջ համակարգի կենսագործունեությունը: Փաստ է, որ կապիտալիստական զարգացած երկրներն են առաջին հերթին շահագրգռված իրենց պետություններում եկամտիստացման բարձր նորմայի ապահովմամբ, այլ ոչ թե կախյալ երկրների զարգացմամբ: Մյուս կողմից կապիտալիկուտակման տրամաբանությունը ենթադրում է կախյալ երկրներում հետագա սոցիալական բևեռացման,բնակչության շահագործման ուժեղացման և բացարձակ աղքատացման, գործազրկության պահպանմանշարունակական գործընթաց: Մասամբ այդ նպատակի իրականացմանն են նաև անուղղակիորեն միտված զարգացածերկրների կողմից կախյալ երկրներին «պարտադրված» անցման

ժամանակաշրջան կոչված կառուցվածքայինվերափոխումների ծրագրերը, որոնց խնդիրը մի կողմից երկիրն ընդգրկելն է կապիտալի կուտակման ընդհանուրմոդելի մեջ, մյուս կողմից՝ սոցիալական կառուցվածքի հետագա վերափոխումը: Քանի որ նեոլիբերալիզմի փուլում կապիտալի եկամտային մասը երկրի ներսում նվազում է, առաջին հերթին սոցիալական ոլորտին, մասնավորապես-կենդանի աշխատուժին վճարվող աճող ծախսերի պատճառով, ուստի կախյալ երկրների էժան աշխատանքային ռեսուրսները զարգացած երկրների կապիտալի եկամուտներն ապահովող հսկայական ռեզերվ են, որոնք թույլ ենտալիս հետագայում ևս ապահովել բարձր եկամուտ՝ օգտվելով տարբեր երկրներում կապիտալիզմի զարգացման անհամաչափության փաստից: Նման սոցիալական ռեզերվի, էժան աշխատաշուկայի ստեղծումը ևվերարտադրությունը կախյալ երկրներում ձևավորում է այսպես կոչված մշտապես աճող հարաբերական գերբնակչություն, աճող սոցիալական լարվածություն: Այսպիսով, մարդկությունը սոցիալական զարգացման նմանարատավոր շրջանից դուրս գալու համար կարիք ունի համամարդկային գոյակցության նոր համակարգի մշակման,որը իր էությամբ պետք է վերացնի կապիտալիզմի բազմաթիվ հիմնական արատները:

Размик Тигранян, Роль социальных институтов в процессе преобразования социальной структуры - Таким образом, актуальность трансформации заключается в приобретении и соответсвующих требованиям времени характеристик социальной жизни, в течение которой как но-экономических сферах.

Понятие переходный период зачастую достоверно не отражает происходящие процессы постольку, поскольку начало и конец данного явления не являются однозначными. Более того, в отдельных случаях переходный период рассматривается не в качестве со-

циологического понятия, а как понятие, которое характеризует переход от капитализма к социализму, а не наоборот.

Трансформация – это не просто синоним терминов «развитие», «преобразование», «модернизация», а самостоятельная категория характеризующая общество переходний период. Эта категория описывает особое состояние общества, при котором происходят качественные переходы и изменения форм социальных связей, типа и способов развития. Трансформация включает компоненты модернизации, постмодернизации, традиционного отступления. Глобализация оказывает трансформирующее влияние на все базовые структуры и ценности современной цивилизации

Razmik Tigranyan, The role of the social institutions in the process of social struktures transformation - Transformation is not only synonym of the terms “development”, “formation”,“modernization”, but it is also a self category characterizing the society of transformationperiod. This category describes the peculiar state of the society, when qualitative transformsand changes of forms of social relations, types and ways of development take place.Transformation includes components of modernization, post-modernization, traditionaldigression. Globalization has a transforming influence on all the basic structures and valuesof the contemporary civilization.

Ուղարկվել է խմբագրություն 31.10.2024թ.
Գրախոսվել է 05.11.2024թ.
Ստորագրվել է տպագրության 07.11.2024թ.